Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
18 ապրիլի 2023 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ (ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ)

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) էթիկայի (բարեվարքության) կանոնակարգի (այսուհետ՝ կանոնակարգ) հիմքում համալսարանի աշխատակազմի կողմից ընդունված համընդհանուր ակադեմիական արժեքներն են, որոնք սահմանում են համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների համակեցության ընդհանուր նորմերը համալսարանի տարածքում, ակադեմիական կազմի ներկայացուցիչների և ուսումնառողների համար բարեվարքության, այդ թվում՝ ակադեմիական կանոնները և դրանց խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը:

2. Սույն կանոնակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի,

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի, համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի» ծրագրի շրջանակում տպագրված նյութերի, մասնավորապես՝ ուսումնառողների, վարչական և ակադեմիական աշխատակազմի համար բարձրագույն ուսումնական հաստատությունների տիպային էթիկայի կանոնագրքերի հիման վրա:

3. Սույն կանոնակարգի ընդունման նպատակն է նպաստել համալսարանի առաքելության իրականացմանը, յուրաքանչյուր աշխատողի, ուսումնառողի կողմից համալսարանի դերակատարության և դրանում սեփական տեղի և դերի գիտակցմանը, ակադեմիական ազնվության արմատավորմանը, համալսարանական մշակույթի զարգացմանը:

4. Սույն կանոնակարգը համալսարանում էթիկայի և բարեվարքության ուղեցույց է, որին պարտավոր են հետևել բոլորը:

5. Համալսարանի առաքելության, արժեքների և սկզբունքների իրականացումը սերտորեն կապվում է բարոյաէթիկական խնդիրների լուծման հետ:

2. ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացման, համալսարանի շահառուների իրավունքների ու պարտականությունների սահմանման, դրանց գիտակցված պահպանման և իրականացման համար անհրաժեշտ են էթիկայի որոշակի համապարտադիր սկզբունքներ, որոնցից են.

1) **հարգանք այլոց նկատմամբ՝** համալսարանի բոլոր աշխատակիցները, ուսումնառողները պարտավոր են հարգալից վերաբերվել կրթության և գիտության ոլորտներում ներառված բոլոր մարդկանց.

2) **բարեվարքություն՝** հիմնարար արժեքներից բխող վարքագիծ է՝ համահունչ բարոյաէթիկական սկզբունքներին ու չափանիշներին.

3) **ազնվություն՝** համալսարանի աշխատակիցները և ուսումնառողները պետք է դրսևորեն ակադեմիական միջավայրին վայել ազնվություն.

4) **օրինականություն՝** համալսարանի աշխատակիցները և ուսումնառողները պետք է ձեռնպահ մնան այնպիսի գործողություններից, որոնք չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին.

5) **վստահություն՝** համալսարանի աշխատակիցները և ուսումնառողները պետք է ամեն ճիգ գործադրեն, որպեսզի համալսարանում իրենց գործունեությունը հիմնվի փոխադարձ վստահության վրա՝ կառուցողական գործընկերության և համերաշխության մթնոլորտում.

6) **ակադեմիական բարեվարքություն՝** ուսումնառության և գիտակրթական գործունեության իրականացում մասնագիտական էթիկայի (աշխատասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, նպատակասլացություն, նպատակներին հասնելու ուղիների ընտրության ունակություն, մասնագիտական մակարդակի համակարգված բարելավում, տոկունություն, ինքնատիրապետում)՝ մասնագիտական վարվելակերպի սկզբունքներին և բարոյական վարքագծի կանոններին համապատասխան.

7) **արդարություն՝** արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականության իրականացում՝ անկախ քաղաքականության թիրախ հանդիսացող խմբերի տարիքից, խոցելի խմբից, գենդերային ինքնությունից, ռասայից, էթնիկ պատկանելիությունից, դավանանքից, ինչպես նաև բարձրագույն կրթության հասանելիության ապահովում սոցիալական լայն շերտերի համար: Բացի դրանից, համալսարանի բոլոր շահառուները միմյանց նկատմամբ պետք է լինեն

անկողմնակալ, հեռու մնան խտրականությունից և անազնիվ դրսևորումներից, զերծ մնան կոռուպցիոն երևույթներից և խուսափեն հովանավորչությունից.

8) **թափանցիկություն՝** հանրությանը իրազեկ դարձնել համալսարանի, նրա շահառուների գործունեությանը և գործառույթներին.

9) **ճշմարտացիություն՝** հանրությանը ներկայացնել անաչառ (օբյեկտիվ) տեղեկատվություն.

10) **հրաժարում շահերի բախումից՝** անձնական օգուտով կամ շահով պայմանավորված որոշումների բացառում.

11) **հաշվետվողականություն՝** սեփական լիազորությունների նկատմամբ լինել հաշվետու և պատասխանատու, ստանձնած պարտականությունների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերաբար հանդես գալ հաշվետվությամբ.

12) **պարտքի զգացում՝** սեփական բարոյական պատասխանատվության գիտակցում համալսարանի, նրա հեղինակության նկատմամբ.

13) **պատիվ և արժանապատվություն՝** մարդու մատուցած ծառայությունների հանրային ընդունում, հաջողությունների գնահատում, սոցիալական պաշտպանվածության այնպիսի կառուցակարգերի ներդնում, որոնք կապահովեն յուրաքանչյուր աշխատակցի, ուսումնառողի պատիվն ու արժանապատվությունը.

14) **ակադեմիական ազատություն՝** ակադեմիական կազմի և գիտական աշխատողների մտքի ու խոսքի, դասավանդման մեթոդներն ընտրելու, գիտահետազոտական գործունեություն իրականացնելու և դրանց արդյունքները հրապարակելու ազատություն.

15) **համալսարանի մասնակցային կառավարում՝** ղեկավարման և կառավարման գործընթացների բոլոր շահառուների առավել ներգրավվածություն և կառավարում՝ բարոյականության հիմնական չափանիշներով:

7. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն են.

1) **ակադեմիական աշխատանք՝** հրապարակված կամ չհապարակված ցանկացած ինքնուրույն գիտական կամ գիտահանրամատչելի աշխատանք, այդ

թվում՝ անհատական, կուրսային և ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզ, թեկնածուական և դոկտորական ատենախոսություն, գիտական և գիտահանրամատչելի հոդված, զեկույց, դասախոսությունների տեքստ, ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկ, դասագիրք կամ վերջիններիս հավասարեցված այլ գիտական կամ գիտահանրամատչելի աշխատանք.

2) **գրագողություն**՝ ուրիշի ստեղծագործությունից, ներառյալ գիտական/ակադեմիական աշխատանքից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը, ներառյալ՝

ա. տեքստի յուրացում՝ առանց պատշաճ կերպով հղում անելու այլ հեղինակի կամ հեղինակների մշակած տեքստը բառացիորեն կամ նույնիմաստ բառերի օգտագործմամբ ներկայացվում է իբրև սեփական մշակում,

բ. մտքի յուրացում՝ առանց պատշաճ հղման այլ հեղինակի կամ հեղինակների աշխատանքների վերաշարադրում, այդ թվում՝ օտարալեզու աղբյուրների թարգմանության միջոցով,

գ. մոդելի, բանաձևի, գծապատկերի կամ աղյուսակի յուրացում՝ առանց պատշաճ հղման այլ հեղինակի կամ հեղինակների կողմից մշակված մոդելի, բանաձևի, կազմված աղյուսակի կամ կառուցված գծապատկերի ներկայացում որպես ինքնուրույն աշխատանք,

դ. տվյալների յուրացում՝ առանց պատշաճ հղման, ակադեմիական աշխատանքում երկրորդային տվյալների որևէ կերպ օգտագործման կամ մշակման,

ե. հեղինակային կարգավիճակի յուրացում՝ այլ հեղինակի կամ հեղինակների հրատարակած աշխատանքների ներկայացում իբրև սեփական հրապարակում,

զ. ինքնագրագողություն՝ երբ հեղինակը կամ հեղինակները նախկինում իրենց կողմից հրապարակված տեքստը կամ միտքը վերահրատարակում են առանց սկզբնական աղբյուրի համապատասխան հղման,

է. կեղծ հղում՝ երբ հեղինակը կամ հեղինակները որպես տեքստի կամ մտքի սկզբնաղբյուր նշում են մտքի կամ տեքստի հետ կապ չունեցող հղում.

3) **հղում՝** ակադեմիական աշխատանքում գրառում, որը նույնականացնում է աշխատանքի կոնկրետ հատվածը կամ աշխատանքում առկա աղյուսակները, գծապատկերները և վիճակագրությունը, սկզբնաղբյուրի համապատասխան հատվածի հետ.

4) **առաջնային տվյալ՝** հեղինակի կամ հեղինակների կողմից սեփական ուժերով, այդ թվում նաև դաշտային աշխատանքների միջոցով հայթայթված տվյալներ, որոնք որևէ կերպ օգտագործվում են ակադեմիական աշխատանքի մեջ.

5) **երկրորդային տվյալ՝** հեղինակի կամ հեղինակների կողմից կոնկրետ աղբյուրից վերցված տվյալներ:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Համալսարանի աշխատակիցը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

1) հարգել պետական խորհրդանիշները և պետական լեզուն.

2) իր գործունեության ընթացքում մշտապես և առանց վերապահումների առաջնորդվել համալսարանի շահերով՝ կանխելով և բացառելով բոլոր հնարավոր դրսևորումները՝ սեփական շահը վեր դասել համալսարանի շահերից կամ փորձել շահույթ ստանալ՝ օգտագործելով զբաղեցրած պաշտոնը.

3) աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, կարգապահ, ճշտապահ, զուսպ, օրինակելի, լսել դիմացինին, հասկանալ նրան.

4) համալսարանը ներկայացնելիս, համալսարանի անունից հանդես գալուց լինել պատվախնդիր, միաժամանակ արդար և շրջահայաց.

5) բարեկիրթ հարաբերություններ պահպանել ուսումնառողների, աշխատակազմի և գործընկերների հետ.

6) նպաստել համալսարանի նկատմամբ հանրության վստահության ամրապնդմանը.

7) լինել բարեկիրթ և ուշադիր պաշտոնատար անձանց, աշխատակիցների և այլոց հետ շփումներում, կողմնակալ վերաբերմունք չդրսևորել ընկերների և բարեկամների նկատմամբ, այլ լինել արդար.

8) հարգել, հաշվի առնել և գնահատել գործընկերների մասնագիտական կարծիքը և ունեցած ներդրումը.

9) գործընկերների հետ հարաբերություններում լինել ուշադիր, օրինապահ, օրինակելի, արդարամիտ և նրբանկատ, խնայել իր և գործընկերների ժամանակը, չզբաղվել զրպարտությամբ.

10) չքննարկել գործընկերոջ վարքագիծը, գործնական, մասնագիտական, անձնական հատկանիշները.

11) պահպանել ակադեմիական բարեվարքության սկզբունքները, հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ, այլոց աշխատանքն իրեն չվերագրել և չկեղծել արդյունքները.

12) ակադեմիական աշխատանքներում առաջնային տվյալներ օգտագործելիս կամ մշակելիս հստակորեն նշել տվյալների հավաքման եղանակի մասին, իսկ երկրորդային տվյալներ օգտագործելիս կամ մշակելիս դնել հղումներ՝ մատնանշելով աղբյուրը.

13) աշխատանքային պարտականությունների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը չօգտագործել անձնական շահերի համար.

14) հարգել աշխատակիցների արժանապատվությունը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական և (կամ) այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային, նյութական կամ այլ դրությունից.

15) պաշտպանել ուսումնառողների ակադեմիական ազատությունը.

16) աշխատանքային հարաբերություններում պահպանել աստիճանակարգությունը (սուբորդինացիա).

17) աշխատավայրում պահպանել անվտանգության և աշխատանքի պաշտպանության համապատասխան պահանջները, վերացնել կամ անմիջական ղեկավարին տեղեկացնել առողջությանը կամ աշխատանքի պաշտպանությանը սպառնացող վտանգի մասին:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

9. Համալսարանի ուսումնառողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

1) համալսարանի գույքը և նյութական միջոցներն օգտագործել ըստ նշանակության և խնայողաբար.

2) հարգել դասախոսի աշխատանքը, հարգանքով վերաբերվել նրա գործին և մասնագիտությանը.

3) հարգել մյուս ուսումնառողների կարծիքը, ազգային, քաղաքական, կրոնական համոզմունքները, արժանապատվությունը.

4) ունենալ սեփական արժանապատվության զգացում, ինքնահարգանք.

5) տիրապետել ու պահպանել իրավական ու բարոյական նորմերը.

6) ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում բացառապես առաջնորդվել ակադեմիական ազնվության, գիտության առաջընթացին ծառայելու հանձնառությամբ.

7) գիտակցել ազգային-հասարակական կյանքում ուսումնառողի տեղն ու դերը և դրսևորել դրանցից բխող լրջություն և պատասխանատվություն.

8) օրինակելի վարքագծի տարրական նորմերը պահպանել լսարանում, միջանցքում, միջավայրում.

9) պահպանել ակադեմիական բարեվարքության սկզբունքները՝ համալսարանում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության, ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության,

հայցորդության ձևակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերին համապատասխան:

5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գրագողությունը, երբ յուրացված նյութի համընդհանուր ծավալը գերազանցում է ակադեմիական աշխատանքի ընդհանուր ծավալի 2 տոկոսը: Ակադեմիական աշխատանքի ծավալը հաշվարկելիս չեն ներառվում աշխատանքի տիտղոսաթերթը, գրականության ցանկը և հավելվածները: Համընդհանուր ճշմարտությունների և հանրության լայն զանգվածներին հայտնի փաստը կամ տեղեկույթը չի կարող դիտվել իբրև գրագողություն:

11. Առանց այլ անձի գիտության վերջինիս հետ ցանկացած տեսակի ակադեմիական աշխատանք հրապարակելը և վերջինիս որպես հեղինակ (հեղինակներ) ներկայացնելը:

12. Ակադեմիական աշխատանքը սեփական անձին վերագրելու և որպես ինքնուրույն աշխատանք ներկայացնելու մտադրությամբ, այլ անձի կամ անձանց վճարելը կամ գումար առաջարկելը:

13. Վստահության չարաշահման միջոցով կամ տեխնիկական միջոցների գործադրմամբ այլ անձի կատարած և չհրապարակված ակադեմիական աշխատանքի յուրացումը և որպես ինքնուրույն աշխատանք ներկայացումը:

6. ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ

14. Սույն կանոնակարգի և էթիկայի նորմերի խախտման հետ կապված հարցերը քննարկվում են էթիկայի հանձնաժողովում:

15. Կարգապահական տույժերը պետք է հենվեն արդարության և պատշաճ ծանուցման սկզբունքների և գործող օրենսդրության պահանջների վրա:

16. Աշխատակիցների և ուսումնառողների կողմից սույն կանոնակարգի խախտման վերաբերյալ դիմում-բողոքը ներկայացվում է էթիկայի հանձնաժողովի նախագահին, որն էլ իր հերթին՝ հանձնաժողովի քննարկմանը:

17. Էթիկայի հանձնաժողովը քննարկում է, թե արդյոք.

1) դիմում-բողոքում ներկայացված են սույն կանոնակարգի խախտման վերաբերյալ ողջամիտ հիմքեր.

2) ենթադրյալ խախտումները սույն կանոնակարգի խախտումներ են.

3) էթիկայի հանձնաժողովը իրավասու է քննարկել այդ խախտումները:

18. Կարգապահական տույժերը կիրառելիս հաշվի են առնվում.

1) խախտման ծանրությունը, հնարավոր հետևանքները.

2) կատարման հանգամանքները:

19. Ելնելով խախտման բնույթից՝ հանձնաժողովը կարող է աշխատակիցների և ուսումնառողների վերաբերյալ տալ էթիկայի հարցերով գնահատականներ և ներկայացնել առաջարկություններ վարքագիծը փոխելու համար:

20. Կանոնների կոպիտ խախտման համար աշխատակցի և ուսումնառողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքին և համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան:

21. Կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին էթիկայի հանձնաժողովի ընդունած որոշումը քննարկվում և հաստատվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22. Սույն կանոնակարգը ընդունվում է և դրանում փոփոխություններ ու լրացումներ են կատարվում համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: